«Գյումրու բժշկական կենտրոն » ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գ. Նժդեհ 3,
Էլ. հասցե՝ gnumnergyumrimc@gmail.com

«Հայկազ Պալյան Նորայրի» Ա/Ձ
Հասցե՝ ք. Գյումրի Պ. Սևակ շենք 13
Էլ. Փոստ՝ artak151980@mail.ru

ք.Գյումրի 10.04.2024թ.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետը և ուսումնասիրելով«Գյումրու բժշկական կենտրոն » ՓԲԸ-ի և «Հայկազ Պալյան Նորայրի» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 11.03.2024թ. կնքված **«N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-5»** ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ նշված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ «Գյումրու բժշկական կենտրոն » ՓԲԸ-ի որոշումը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «Հայկազ Պալյան Նորայրի» Ա/Ձ) պարտավորվում է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն » ՓԲԸ-ի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարումը համաձայն կնքված պայմանագրի պետք է իրականացվի ըստ պատվիրատուի պահանջի 20 օրացուցային օրվա ընթացքում, սակայն մատակարարը ներկայացրել է գրություն առ այն, որ ապրանքը չի կարող մատակարարել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ չիրականացնելով պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը, ուստի «Գյումրու բժշկական կենտրոն » ՓԲԸ-ն՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի հրաժարվում է 11.03.2024թ. Ընկերության հետ կնքված **N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-5** ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.13 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները 62250 (վաթսուներկու հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ և 93375 (իննսուներեք հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, եթե Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարումները , ապա Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցումը Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Հարգանքով,

տնօրեն Ա.Իսահակյան